ՀԱՅԱՍՏԱՆ-ԹՈՒՐՔԻԱ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ԽՈՒՄԲ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Նոյեմբեր 2021 թ.

Հայաստան-Թուրքիա փորձագետների երկխոսության խումբը (ՓԵԽ) ստեղծվել է՝ քաղաքացիական հասարակության կուտակած փորձի հիման վրա Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների կարգավորմանը նպաստող վստահության ամրապնդմանն ուղղված միջոցառումներ մշակելու նպատակով: Հայաստանի և Թուրքիայի քաղաքական, գիտական և քաղաքացիական հասարակության շրջանակները ներկայացնող փորձագետներից կազմված ՓԵԽ-ը հավաքվել է բազմաթիվ առիթներով՝ քարտեզագրելով տարբեր ոլորտներում առկա խոչընդոտները, նպատակ ունենալով հետազոտել վստահություն ձևավորող համապատասխան միջոցներ, և կրթության ոլորտը այդ միջոցներից մեկն է: Քաղաքականության սույն հուշագիրը և այստեղ մանրամասն ներկայացված մի շարք առաջարկություններ հիմնված են թե՛ Հայաստանի, թե՛ Թուրքիայի կրթության ոլորտի փորձագետների և գիտնականների հետ անհատական հանդիպումների, քննարկումների, ինչպես նաև ՓԵԽ-ի ուղղորդմամբ երկու երկրներից կրթական հաստատությունների ներգրավմամբ փորձնական մի շարք ծրագրերի արդյունքների վրա:

Հայաստան-Թուրքիա փորձագետների երկխոսության խումբը երկու երկրներից փորձագետների համատեղ նախաձեռնություն է՝ բաղկացած քաղաքականության, դիվանագիտության, գիտության և քաղաքացիական հասարակության ոլորտի մասնագետներից, ովքեր պատրաստ են աջակցելու Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորմանը տարբեր մակարդակներում: Երկխոսության խումբը ձևավորվել է 2016 թ.: Երկխոսության խմբի հիմնական նպատակը երկու հարևանների միջև հարաբերությունների կարգավորմանը նպաստող վստահության ամրապնդմանն ուղղված միջոցառումների մշակումն է: Երկխոսության խումբը մասնավորապես հետաքրքրված է առևտրի և բիզնեսի, միգրացիայի, կրթության և մշակույթի ոլորտների հնարավորություններով և նորարարական գաղափարներով:

Հայաստանի և Թուրքիայի միջև կրթության ոլորտում համագործակցություն սկսելու և այն զարգացնելու համար պետական ուղիղ կառուցակարգերի բացակայության պատճառով զգալի թվով հնարավորություններ են անտեսվում: Չնայած միջազգային համագործակցության մի շարք շրջանակների առկայությանը՝ բարձրագույն կրթության ոլորտում Թուրքիայի և Հայաստանի միջև ինստիտուցիոնալ համագործակցությունը խիստ սահմանափակ է: Վերջին տասնամյակի ընթացքում թե՛ Հայաստանի, թե՛ Թուրքիայի քաղաքացիական հասարակության մի շարք կազմակերպություններ և համալսարաններ են ակտիվացել՝ ոչ ֆորմալ և ֆորմալ կրթության ոլորտներում համագործակցային ուղիներ ստեղծելով: Այս բոլոր ջանքերն առաջին հերթին էականորեն նպաստել են անհատական կապերի ձևավորմանը, սակայն ոլորտում անմիջական և կայուն ինստիտուցիոնալ հարաբերությունների հաստատումը մեծ հավանականությամբ խոստումնալից կարող է լինել, քանի որ Հայաստանն ու Թուրքիան բարձրագույն կրթության ոլորտում ունեն իրենց ուժեղ կողմերը:

Հայաստանի և Թուրքիայի կրթական հաստատությունների և ակադեմիական շրջանակների ներկայացուցիչների միջև փորձագիտական կարողությունների փոխանակումը կարող է երկարաժամկետ և կարճաժամկետ արդյունքների հանգեցնել: Այդ իսկ պատճառով հարկ է ջանքեր գործադրել՝ խթանելու, դյուրացնելու և առաջ մղելու գործակցությունը երկու երկրներում համապատասխան հաստատությունների միջև՝ արդեն իսկ առկա միջազգային շրջանակների և ուղիղ շփումների միջոցով: Առանձնացնելով միջազգային հաստատությունների այն շրջանակները, որոնց անդամակցում են Թուրքիան և Հայաստանը, քարտեզագրելով Հայաստանում և Թուրքիայում բարձրագույն կրթության ներկայիս վիճակը, դիտարկելով համագործակցության հնարավոր ոլորտները և երկու երկրների հաստատություններին և իշխանություններին առաջարկություններ ներկայացնելով՝ քաղաքականության սույն հուշագիրը նպատակ ունի լույս սփռել կառուցողական համագործակցության հնարավոր ուղիների վրա:

Միջազգային ինստիտուցիոնալ շրջանակներ[1]

Թուրքիան և Հայաստանը ներգրավված են միջազգային ինստիտուցիոնալ մի շարք շրջանակներում, որոնք անդամ երկրների և հաստատությունների միջև համագործակցություն և ակադեմիական փոխանակումներ իրականացնելու հնարավորություն են ընձեռում:

Բոլոնիայի գործընթացը

Թե՛ Թուրքիան, թե՛ Հայաստանը Բոլոնիայի գործընթացի՝ Բարձրագույն կրթության եվրոպական տարածքի լիարժեք անդամներ են: Բոլոնիայի գործընթացի շրջանակներում Հայաստանն անցում է կատարել երկաստիճան (բակալավրի և մագիստրոսի) համակարգի, ինչպես նաև կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգին (ԿԿՓՀ):

«Էրազմուս+» ծրագիր

Հայաստանն ու Թուրքիան երկուսն էլ ներգրավված են Էրազմուս+ ծրագրում: Թուրքիան «Էրազմուս+» ծրագրային երկրներից է, այդ երկրները կարող են լիարժեք կերպով մասնակցել ծրագրի բոլոր «Հիմնական գործողություններ»-ին, այնինչ Հայաստանը գործընկեր երկիր է և մի շարք կոնկրետ չափանիշներ կամ պայմաններ բավարարելու դեպքում կարող է մասնակցել ծրագրի որոշ «Հիմնական գործողություններ»-ին:

«Էրազմուս+» ծրագրի միջազգային բարձրագույն կրթության ուղղությունը ներառում է քաղաքականության բարեփոխումներին, հաստատությունների կարողությունների զարգացմանը, նորարարությանը, ընդօրինակելի աշխատակարգերի փոխանակմանը, ինչպես նաև ուսանողների և դասախոսների փոխանակումներին ուղղված գործողություններ և կառուցակարգեր:

«Էրազմուս+» ծրագրի շրջանակներում Հայաստանի և Թուրքիայի միջև հնարավոր համագործակցության հիմնական ոլորտը համալսարանների և ինստիտուտների միջև բարձրագույն կրթության ոլորտում փոխանակման ծրագրերն են: «Հիմնական գործողություններ 1» և «2»-ի ներքո առաջարկվող հնարավորություններից են կոնսորցիումների կողմից իրականացվող բարձր մակարդակի ներառական միջազգային ուսումնական ծրագրերը՝ Հայաստանում և/կամ Թուրքիայում բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների և աշխատակազմի համար ծրագրային կամ գործընկեր երկրներում ուսումնական և/կամ մասնագիտական փորձի փոխանակման հնարավորությունների ստեղծումը, համագործակցություն և գործընկերություն խթանող բարձրագույն ուսումնական ծրագրերի ոլորտի կարողությունների զարգացումը, գիտելիքահեն դաշինքների և ռազմավարական գործընկերությունների հաստատումը բարձրագույն ուսումնական հաստատությունների և ձեռնարկությունների միջև:

«Էրազմուս+» ծրագրին համատեղ դիմումներ ներկայացնելու մի շարք փորձեր են ձեռնարկվել Հայաստանի և Թուրքիայի տարբեր հաստատություններ կողմից՝ Հայաստանում Եվրասիա միջազգային համալսարանի (ԵՄՀ) և Թուրքիայում Մերձավոր Արևելքի տեխնիկական համալսարանի (ՄԱՏՀ) մասնակցությամբ: Այս բուհերն իրական ակադեմիական փոխանակումների առաջամարտիկներն են և համաձայնագիր են ստորագրել 2014-2021 թթ. համար: Այս ժամանակահատվածի ողջ ընթացքում ԵՄՀ աշխատակազմի 5 անդամ և 6 ուսանող հնարավորություն են ունեցել «Էրազմուս+» փոխանակման ծրագրի շրջանակներում այցելել ՄԱՏՀ: ՔՈՎԻԴ-19 համավարակի պատճառով պլանավորված գործողությունները պասիվացան 2020-2021 թթ., այնուամենայնիվ, երկու հաստատություններն էլ ցանկանում են առաջ մղել իրենց համագործակցությունը: Ավելին՝ 2019 թ. Թուրքիայի ՄԵՖ համալսարանը և Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանը (ՃՇՀԱՀ) «Էրազմուս+» ծրագրին համատեղ դիմում ներկայացրին: Նույն թվականին Ստամբուլի Բիլգի համալսարանն «Էրազմուս+» ծրագրին ներկայացրեց համատեղ դիմում հայաստանյան երեք համալսարանների՝ Հայ-ռուսական համալսարանի (ՀՌՀ), ՃՇՀԱՀ-ի և Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) հետ: Նախագծերը հաստատվել են և իրականացվելու են առաջիկա տարիներին:

Եվրոպական համալսարանների միություն (ԵՀՄ)

Եվրոպական համալսարանների միությանը (ԵՀՄ՝ 47 եվրոպական երկրներում համալսարանների և ազգային հաստատությունների ռեկտորների համաժողովների ներկայացուցչական կազմակերպությանը, անդամակցում է թուրքական 62 և հայաստանյան 2 անդամ համալսարան, մասնավորապես՝ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանը և Երևանի պետական համալսարանը: ԵՀՄ-ն անդամ համալսարանների միջև և ԵՄ հաստատությունների հետ փոխշփումների համար հարթակ է:

Փորձագետների երկխոսության խմբի ջանքերի շնորհիվ՝ ԵՀՄ-ի հարթակի շրջանակներում 2018 թ. առաջին անգամ ՃՇՀԱՀ-ից հայ կին պրոռեկտոր ներգրավվեց Կին ռեկտորների եվրոպական միության (ԿՌԵՄ) մեջ: ԿՌԵՄ-ի հիմնական նպատակներից մեկը բարձրագույն կրթության ոլորտում կանանց ներկայացվածությունը մեծացնելն է, ինչը կարող է հանդես գալ որպես իրավազորող գործիք՝ ոչ միայն համագործակցության ուղիների ստեղծման, այլև թե՛ Հայաստանի, թե՛ Թուրքիայի ակադեմիական շրջանակներում նկատելի գենդերային անհավասարության խնդրին լուծում տալու համար: Ըստ վիճակագրության՝ 2019-2020 թթ. ուսումնական տարում Թուրքիայում կին համալսարանականների տոկոսը մոտավորապես 45%[2] է, այնինչ Հայաստանում այդ տոկոսը մոտավորապես 41%[3] է: Չնայած այս թվերին՝ երկու երկրներում էլ բարձրագույն կրթության ոլորտում որոշումների կայացման և կառավարման մակարդակներում կանանց հավասար ներկայացվածությունը դեռևս խնդիր է: Ուստի կին համալսարանականների ներգրավվածության ընդլայնման անհրաժեշտությունը ոչ միայն այս ուղղությամբ, այլ նաև այլ հնարավոր նախաձեռնություններում ակնհայտ անհրաժեշտություն է:

«Հորիզոն Եվրոպա»

«Հորիզոն Եվրոպա»-ն Եվրոպական հանձնաժողովի կողմից մեկնարկել է որպես հետազոտության և նորարարության շրջանակային ծրագիր, որն իրականացվում է 2021-2027 թթ.: Այն եկել է փոխարինելու նույն նպատակով ստեղծված նախորդ գործիքին՝ «Հորիզոն 2020»-ին, որին անդամակցում էին և՛ Թուրքիան, և՛ Հայաստանը: 2021 թ. նոյեմբերին Հայաստանին և Թուրքիային «Հորիզոն Եվրոպայի» շրջանակներում ասոցացված երկրի կարգավիճակ շնորհվեց, և այս երկրները հիմա կարող են օգտվել ծրագրից նույն պայմաններով, ինչ ԵՄ անդամ-պետությունները, այն է՝ լիարժեք հասանելիություն ծրագրի ֆինանսավորման հնարավորություններին: Որպես միջազգային համագործակցության համար ավելի լայն հարթակ՝ «Հորիզոն Եվրոպան» խրախուսում է ամբողջ աշխարհի հետազոտողներին և ներդրողներին՝ գործընկերություն հաստատել թե՛ ԵՄ անդամ, թե՛ ԵՄ անդամ չհանդիսացող չասոցացված երրորդ երկրների հետ: Իր ռազմավարական ծրագրի շրջանակներում «Հորիզոն Եվրոպան» հիմնականում կենտրոնանում է սոցիալական գիտությունների, հումանիտար գիտությունների, գենդերի, ինչպես նաև տեխնոլոգիաների ոլորտում հետազոտության, նորարարության աջակցության և միջազգային համագործակցության վրա: Ծրագիրը կարող է Հայաստանի և Թուրքիայի ակադամիական հաստատությունների համար ընդհանուր հետաքրքրությունների ոլորտներում սահուն կերպով համատեղ նախաձեռնություններ մշակելու հնարավոր հարթակ դառնալ:

Հայաստանում և Թուրքիայում բարձրագույն կրթության քարտեզագրում

Բարձրագույն կրթության ոլորտի քարտեզագրումը կարող է օգտակար լինել համագործակցության հնարավոր ուղիների որոնման ճանապարհին՝ այդ կերպ ընդլայնելով Հայաստանի և Թուրքիայի միջև ակադեմիական ոլորտում համագործակցության շրջանակը:

Հայաստանում ներկայումս բարձրագույն կրթության ոլորտում գործում է 26 պետական համալսարան, որից 4-ը՝ միջազգային: Կան ևս 33 լիցենզավորված մասնավոր համալսարաններ, ինչպես նաև մի շարք այլ կրթական հաստատություններ, օրինակ՝ ինստիտուտներ և ակադեմիաներ: 2019-2020 թթ. ուսումնական տարվա ընթացքում 5176[4] միջազգային ուսանող էր ընդգրկված Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում: Միևնույն ժամանակ Թուրքիայում կա 129 պետական համալսարան և 74 հիմնադրամի կազմակերպաիրավական ձև ունեցող համալսարան: 2019-2020 թթ. ուսումնական տարում 185 847[5] միջազգային ուսանող է ներգրավված եղել Թուրքիայի բարձրագույն ուսումնական հաստատություններում:

Երկու երկրների մի շարք ուսանողներ ներգրավված են հարևան երկրի բարձրագույն ուսումնական հաստատություններում: 2019-2020 թթ. ուսումնական տարում 8 հայաստանցի ուսանող էր սովորում Թուրքիայի համալսարաններում[6]: Նույն ուսումնական տարում Թուրքիայից 6 ուսանող է ներգրավված եղել Հայաստանի բակալավրական ծրագրերում: Թուրքիայում սովորող Հայաստանի մի շարք քաղաքացիներին շնորհվել է Թուրքիայի կառավարության կողմից ֆինանսավորվող «Türkiye» կրթաթոշակ:

Ինչպես ուրվագծված է Թուրքիայի Բարձրագույն կրթության խորհրդի (YÖK) կողմից սահմանված կանոնակարգերում օտարերկրյա համալսարանները պետք է Խորհրդի կողմից գրանցվեն՝ ապահովելու իրենց շնորհած դիպլոմների ճանաչումն ու համարժեքությունը: Մինչև 2015 թ. հայաստանյան համալսարաններից միայն Երևանի պետական համալսարանը (ԵՊՀ) և Գյումրու մանկավարժական ինստիտուտն էին ներառված YÖK-ի կողմից ճանաչված համալսարանների շարքում, քանի որ դրանք գրանցված էին դեռ Խորհրդային ժամանակաշրջանում: 2015 թ. YÖK-ն իր ստանդարտ ընթացակարգով հաստատեց ՀԱՀ-ի՝ դիպլոմների ճանաչման համար ներկայացրած դիմումը, և այս հաստատությունը նույնպես ներառվեց ցանկում: Թուրքական համալսարանների կողմից տրված դիպլոմները ճանաչվում են Հայաստանում՝ առանց լրացուցիչ ընթացակարգերի անհրաժեշտության:

Հայաստանի և Թուրքիայի միջև ակադեմիական համագործակցության հնարավորությունները

Փորձագետների երկխոսության խմբի շրջանակներում կազմակերպված թեմատիկ քննարկումների և հանդիպումների հիման վրա Հայաստանի և Թուրքիայի միջև ակադեմիական համագործակցության մի շարք հնարավոր ուղղություններ են հատկորոշվել, այդ թվում՝ թուրքագիտական ու օսմանագիտական ուսումնասիրություններ, երաժշտություն և արվեստ, հնագիտություն, ճարտարապետություն և դիզայն, ինչպես նաև տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ: Թեև այս ոլորտներից մի քանիսը զգալի առաջընթաց են արձանագրել, կան մի շարք այլ ոլորտներ, որոնք դեռ հարկ է ուսումնասիրել և/կամ խթանել:

Մինչ օրս ակադեմիական շրջանակներում փոխանակումների համար առանձնացող ոլորտներից մեկը **թուրքագիտական և օսմանագիտական ուսումնասիրություններն** են: Թեև մի շարք ճանաչողական այցեր են կազմակերպվել և այս ոլորտում անցանց և առցանց լեզվի դասընթացներ են տրամադրվել, դեռևս ակադեմիական փոխանակումներն ընդլայնելու և համատեղ նախաձեռնություններ մշակելու անհրաժեշտություն և հետաքրքրություն կա: Հայաստանում **թուրքագիտական և օսմանագիտական ուսումնասիրություններ** իրականացնող երեք խոշոր հաստատություններ կան՝ ԵՊՀ-ի Թյուրքագիտության ամբիոնը, Գիտությունների ազգային ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտը և ՀՌՀ-ի Արևելագիտության ինստիտուտը: ՀԱՀ-ի Բաց կրթության գրասենյակը

որպես կամընտրական դասընթաց թուրքերենի դասընթացներ է առաջարկում: Թուրքիայում փոքրաթիվ են հայագիտական դասընթացներ առաջարկող հաստատությունները: Կայսերիում (Կեսարիա) Էրջիես համալսարանը և Անկարայի համալսարանը հայոց լեզվի և գրականության ամբիոններ ունեն: Բողազիչիի և Քադիր Հաս համալսարանները հայերենի դասեր են առաջարկում իրենց «Ժամանակակից լեզուներ» ծրագրերի շրջանակում՝ որպես կամընտրական դասընթաց:

Փորձագետների երկխոսության խմբի առաջարկությամբ ջանքեր են գործադրվել նաև **ճարտարապետության** ոլորտում՝ ինստիտուցիոնալ համագործակցության հիմքեր դնելով Թուրքիայի ՄԵՖ համալսարանի և Հայաստանի ՃՇՀԱՀ-ի միջև: Փոխադարձ ակադեմիական ճանաչողական այցերի արդյունքում ճարտարապետության բաժնի ուսանողների համար 2018-2019 թթ. դասախոսությունների մի քանի շարք և երկու ամառային դպրոց է կազմակերպվել: 2018 թ. ամռանը ՄԵՖ համալսարանի Դիզայնի և շինարարության ստուդիայի շրջանակներում[7] ՃՇՀԱՀ-ի հինգ ուսանող և երկու դասախոս հյուրընկալվեցին Ստամբուլի ՄԵՖ համալսարանում՝ կցվելով ՄԵՖ-ի երկու դասախոսի և ինը ուսանողի[8]: Նրանք միասին խաղահրապարակ նախագծեցին և կառուցեցին Ստամբուլում ապրող հայ միգրանտների երեխաների համար: 2019 թ. ամռանը պատասխան երեքշաբաթյա այց կազմակերպվեց Երևան՝ ՄԵՖ-ի տասը ուսանողի և երկու դասախոսի և ՃՇՀԱՀ-ի տասնվեց ուսանողի և երկու դասախոսի մասնակցությամբ: Այս անգամ երկու հարևան երկրներից մասնակցող ուսանողները նախագծեցին և կառուցեցին խաղահրապարակ Անմիջական օգնություն ասոցիացիայի (DAA) հիվանդանոցային դպրոցում, որտեղ ուսում են ստանում 2-17 տարեկան երեխաներ՝ միաժամանակ ստանալով իրենց առողջական քրոնիկ խնդիրներին ուղղված բուժումը[9]: Այս ջանքերի հաջողված արդյունքները առաջ են բերել հետաքրքրություն՝ համագործակցությունը ընդլայնելու և ընդգրկելու հարակից այլ ոլորտներ, մասնավորապես՝ դիզայնը, ներգրավելով նաև այլ հաստատություններ:

Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) ոլորտում կրթությունը Հայաստանի և Թուրքիայի միջև համագործակցության խթանման ենթակա ամենախոստումնալից և գրավիչ ոլորտներից է: Այս ոլորտը Հայաստանում զարգացած է՝ ծրագրակազմերի մշակման և ծրագրավորման ոլորտում զգալի փորձառության կուտակմամբ և հմտացած աշխատուժով: Տեխնոլոգիական կրթության ոլորտում աստիճանաբար ավելացող ծրագրերով՝ Հայաստանը կարող է դառնալ Հայաստանի և Թուրքիայի միջև ակադեմիական համագործակցության կենտրոն: Հայաստանում մի շարք կազմակերպություններ, օրինակ՝ ԹՈՒՄՈ-ն և ՔՈԱՖ-ի Լոռու մարզում գտնվող «ՍՄԱՐԹ» կենտրոնը տեխնոլոգիական կրթություն են տրամադրում հազարավոր երիտասարդ սովորողների համար այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են վեբ դիզայնը, ռոբոտաշինությունը, անիմացիան, ֆիլմերի ստեղծումը և այլն: Դեռահասների տեխնոլոգիական կրթության վրա եզակի շեշտադրումը կարող է Թուրքիայի բարձրագույն կրթության ոլորտում շահագրգիռ հաստատությունների կամ ավելի երիտասարդ տարիքի աշակերտների համար համապատասխան հաստատությունների հետ համագործակցության իմաստալից հնարավորություն դառնալ: Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները Թուրքիայում երիտասարդ սերնդի համար ամենագրավիչ ոլորտներից են, ինչի պատճառով էլ հիմնադրամի կարգավիճակ ունեցող համալսարանները հատկապես մեծապես շահագրգիռ են առաջարկելու ՏՀՏ ոլորտի կրթական ծրագրեր: Պետական համալսարանները կենտրոնանում են համակարգչային գիտությունների և հաշվողական գիտությունների վրա և այս ոլորտներում ունեն ուժեղ կարողություններով օժտված աշխատակազմ: Այս կարողության հզորացման համար նպաստավոր է եղել նաև Թուրքիայի համալսարանական կամպուսներում Տեխնոլոգիայի զարգացման գոտիների հիմնումը, որտեղ աշխատակազմի անդամները տեղակայում են իրենց պատկանող սեփական Հետազոտության և զարգացման (R&D) ընկերությունները: Վերջերս Թուրքիայում տասը համալսարան որակավորվել են որպես «Հետազոտական համալսարաններ», որոնք դրամական աջակցություն են ստանալու տարբեր համակարգերի միջոցով:

Երաժշտության և արվեստի ոլորտում Հայաստանի և Թուրքիայի քաղաքացիական հասարակության տարբեր կազմակերպությունների և անհատ փորձագետների կողմից իրականացված էական թվով նախաձեռնությունների լույսի ներքո կառուցողական մոտեցում կլինի այս ոլորտում համագործակցության հաստատումը՝ հատկապես երկու երկրների կոնսերվատորիաների, առաջատար երաժշտական դպրոցների, նվագախմբերի կամ երգչախմբերի ներգրավմամբ: Թուրքիայում և Հայաստանում երաժշտական ավանդույթների, ժանրերի և երաժշտական գործիքների միջև որոշակի նմանությունները կարող են ինչպես համալսարանական, այնպես էլ բեմական համագործակցության իմաստալից մոտեցումների հիմք հանդիսանալ:

Համագործակցության հնարավորությունները չեն սահմանափակվում վերը նշված ոլորտներով, ընդ որում երկու երկրներում կան առաջանցիկ համալսարանական գործունեության բազմաթիվ այլ ոլորտներ: Անհրաժեշտ է նշել նաև, որ Հայաստանն էական առաջխաղացում է արձանագրել մաթեմատիկայի, ֆիզիկայի, քիմիայի, բժշկագիտության, ճարտարագիտության, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ոլորտներում[10], այնինչ Թուրքիայում տնտեսագիտությունը, արվեստը, դիզայնը և ճարտարապետությունն ընդհանրապես համարվում են բարձրագույն կրթության ոլորտում ուսումնասիրության ամենանախընտրելի ոլորտները: Թուրքիայի համալսարանների ցանկին կարող եք ծանոթանալ այստեղ, իսկ Հայաստանի հիմնական համալսարանների ցանկը կարող եք տեսնել այստեղ:

Առաջարկություններ

Հիմնվելով Փորձագետների երկխոսության խմբի գործունեության վրա և հետամուտ լինելով Հայաստանի և Թուրքիայի միջև կրթական համագործակցության հետագա զարգացմանը՝ կրթական հաստատությունները և անհատ փարձագետները, ինչպես նաև երկու երկրների կառավարությունները կարող են ձեռնարկել հետևյալ միջոցառումները կամ առաջնորդվել ստորև ներկայացված առաջարկություններով: Կարևոր է հիշատակել նաև այն, որ ՔՈՎԻԴ-19 համավարակի ընթացքում առցանց հարթակների ավելի լայն գործածությունը ուղի է հարթել ավելի ստեղծարար և նորարարական նախաձեռնությունների իրականացման համար:

Առաջարկություններ՝ ուղղված Հայաստանում և Թուրքիայում բարձրագույն ուսումնական հաստատություններին, հետազոտական կենտրոններին և քաղաքացիական հասարակության կազմակերպություններին.

- Խրախուսել Հայաստանի և Թուրքիայի համալսարաններին՝ ձեռնարկել և իրականացնել ավելի մեծ թվով ակադեմիական փոխանակումներ և համատեղ նախագծեր միջազգային ինստիտուցիոնալ շրջանակների բազմապիսի գործողությունների միջոցով,
- Խրախուսել և աջակցել Հայաստանի և Թուրքիայի համալսարանական ներկայացուցիչների շփումները միջազգային հարթակներում,
- Աջակցության կառուցակարգեր տրամադրել միջազգային հարթակներում Հայաստանից և Թուրքիայից հատկապես կին համալսարանականների ներգրավման համար,
- Խրախուսել երկու երկրների համալսարանականներին՝ ներգրավվել մյուս երկրի գործընկեր համալսարանի աշխատանքներում որպես մագիստրոսական թեզերի և/կամ թեկնածուական ատենախոսությունների համաղեկավար,
- Խրախուսել Հայաստանի և Թուրքիայի համալսարաններին՝ ստորագրելու երկկողմ համագործակցության համաձայնագրեր, որոնք ուղղված կլինեն համատեղ նախագծեր, օրինակ՝ ամառային/ձմեռային դպրոցներ, ամառային ճամբարներ, քննարկումներ և ցուցահանդեսներ նախաձեռնելուն և իրականացնելուն,
- Խրախուսել Հայաստանի և Թուրքիայի համալսարանների աշխատակազմերին՝ համատեղ հրապարակումներ մշակել,
- Խրախուսել ընդհանուր հետաքրքրության թեմաներով պարբերական և/կամ տարեկան ակադեմիական համաժողովների, ֆորումների կազմակերպումը,
- Հայաստանում խրախուսել օսմաներենի, ինչպես նաև թուրքերենի ու թուրքական գրականության շուրջ հետազոտությունների համար կոնկրետ համագործակցություններ հաստատել՝ կենտրոնանալով օսմաներեն և թուրքերեն աղբյուրների, արխիվային փաստաթղթերի, ձեռագրերի և էպիգրաֆիկ նյութերի հետ աշխատող ուսանողների, գիտնականների և հետազոտողների վրա հետևյալ կերպ՝
    - Խրախուսելով օսմաներենի շուրջ ակադեմիական փոխանակումները, համատեղ ուսումնական և հետազոտական ծրագրերը,
    - Բացահայտելով օսմաներեն ձեռագրերի, այդ թվում՝ հայատառ թուրքերենով նյութերի քարտավորման և վերականգնման հնարավորությունները,
    - Խրախուսել նման աշխատությունների՝ հայերեն և թուրքերեն թարգմանությունները,
    - Ուսումնասիրել Հայաստանում օսմաներենի և թուրքերենի ուսուցման և ռեսուրսների, իսկ Թուրքիայում՝ հայերենի ուսուցման և ռեսուրսների մատակարարումը:
- Հաստատել գործընկերություն բարձր տեխնոլոգիաների, այդ թվում՝ ինֆորմատիկայի, ֆիզիկայի, ճարտարագիտության, ծրագրակազմերի մշակման, ծրագրավորման, անիմացիայի, ռոբոտաշինության ոլորտներում կրթության և համատեղ հետազոտությունների նպատակով,
- Նախաձեռնել համատեղ, կոնկրետ խնդիրների լուծմանն ուղղված թիրախային և թեմատիկ ծրագրեր և դասընթացներ քաղաքագիտության և միջազգային հարաբերությունների, մասնավորապես՝ կովկասագիտության ոլորտում,
- Ուսումնասիրել երաժշտության, կինոմատոգրաֆիայի, արվեստի պատմության և հնագիտության ոլորտներում ակադեմիական համագործակցության հնարավորությունները,
- Ուսումնասիրել ուսումնառության ընթացքի կեսին հասած ուսանողների և/կամ կարիերայում միջին մակարդակի առաջխաղացում ունեցող մասնագետների համար որևէ երրորդ երկրում համատեղ ծրագրերի իրականացման հնարավորությունները,
- Մշակել համատեղ մագիստրոսական և/կամ ասպիրանտական ծրագրեր ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում:

Առաջարկություններ՝ ուղղված Հայաստանի և Թուրքիայի կառավարություններին՝

- Խրախուսել հայաստանյան հաստատություններին գրանցվել YÖK-ի կողմից՝ այդ կերպ ապահովելով դիպլոմների ճանաչումը,
- Նախաձեռնել քննարկումներ YÖK-ի հետ՝ դյուրացնելու հավատարմագրման գործընթացը, ինչպես նաև Հայաստանում համալսարանների համար դիպլոմների համարժեքության ապահովումը,
- Դյուրացնել ընդհանուր հետաքրքրության ոլորտներում մագիստրոսական և/կամ ասպիրանտական համատեղ ծրագրերի ընթացակարգերը:

1 Armenia and Turkey: an Overview of Relations and Prospects for Normalisation, Artak Ayunts, Talha Köse, Burcu Becermen, March 2019, Hrant Dink Foundation Publications, pp 40-41.

2 Բարձրագույն կրթությունը՝ թվերով. Բարձրագույն կրթության խորհուրդ, Թուրքիա:

3 Վիճակագրական տեղեկագիր, Կանայք և տղամարդիկ Հայաստանում, 2020 թ.:

4 Բարձրագույն կրթություն, ՀՀ-ում առկա սոցիալական վիճակը, 2019 թ.:

5 Համալսարանների թիվը, Բարձրագույն կրթության խորհուրդ, Թուրքիա:

6 Բարձրագույն կրթության ոլորտային վիճակագրություն, 2019-2020 թ., Թուրքիա:

7 Դիզայնի և շինարարության ստուդիան իր առանձին ուսումնական պլանն ունեցող կրթական ծրագիր է, որի նպատակն է ուսումնասիրել շինարարության ազդեցությունը և ճարտարապետական կրթության շրջանակներում սոցիալական ազդեցություն ունեցող համատեղ արտադրանք տալ:

8 Հայաստանի և Թուրքիայի ճարտարապետության ֆակուլտետի ուսանողների՝ Ստամբուլում կառուցած խաղահրապարակը:

9 Թուրքիայի և Հայաստանի ճարտարապետության ֆակուլտետի ուսանողների նախագծած և կառուցած խաղահրապարակը Երևանում:

10 Ուսումնառություն Հայաստանում, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն:

Սույն աշխատանքն իրականացվել է Քրեսթ հիմնադրամի աջակցությամբ: Ներկայացված բովանդակությունը ունի զուտ տեղեկատվական բնույթ և չպետք է դիտվի որպես պաշտոնական առաջարկ:

Hrant Dink Foundation
Anarad Hığutyun Binası
Papa Roncalli Sk. No: 128 Harbiye 34373 Şişli / İstanbul
T: +90 212 2403361 - 62 | F: +90 212 2403394 | info@hrantdink.org | www.hrantdink.org

HRANT DİNK VAKFI
HRANT DINK FOUNDATION
ՀՐԱՆԴ ՏԻՆՔ ՀԻՄՆԱՐԿ

CHREST FOUNDATION